# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 34 - 35 (16332) ՇԱԲԱԹ, 23 ՄԱՅԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


## ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է




Մայիսի 26-ին Վրաստանը նշում է պետական անկախության վերականգնման 97-րդ տարելիցը: 1801 թվականին Ռուսաստանի կայսրի հրամանագրով վերացված վրացական պետականությունը ավելի քան մեկդարյա ընդմիջումից հետո, 1918 թվականի մայիսյան այդ օրը վերականգնվեց: Վերականգնվեց, սակայն ընդամենը երեք տարով... Այդ պետությանը վիճակված չէր երկար կյանք: Իրական անկախ պետության արժանանալու համար հարկ էր անցնել 72 երկար ու ծիգ տարիներ, զգալ 1989-ի ապրիլի 9-ի կորստյան ցավը, դառնալ 1992-93 թվականների եղբայրասպան պատերազմի վկան, պարտվել, սական երբեք չհաշտվել պարտության եւ երկրի մասնատման գաղափարի հետ: Եվ այսօր, պետական նոր անկախության 24-րդ տարում, նշելով անկախության վերականգնման 97-ամյա տարելիցի օրը, երկիրը հույսով, վստահությամբ ու համոզվածությամբ է նայում ապագային, վաղվա օրվան:

Մայիսի 26-ին Վրաստանի Անկախության օրվա տոնակատարությունը կսկսվի Թբիլիսիի կենտրոնում՝ Ռուսթավելու պողոտայում, թատերականացված շքերթով, Ազատության հրապարակում կկայանա նորակոչիկների երդման արարողություն: Բացի դրանից, Ռուսթավելու պողոտայում կներկայացվեն պետական տարբեր գերատեսչությունների տաղավարները: Նաեւ կներկայացվի ռազմական տեխնիկայի ցուցահանդես, տեղի կունենան մրցույթներ, մրցումներ, «Ուրախ մեկնարկներ» եւ համերգներ:

Վրաստանի Անկախության օրը զորահանդես չի լինի, բայց պաշտպանության նախարարությունն ավիաշոու է խոստանում:

## ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է



1918թ. մայիսի 28-ից ի վեր Հայաստանում նշվում է Առաջին Հանրապետության կամ անկախության վերականգնման օրը: Ավելի քան վեց դար տառապելով օտար նվաճողների ձեռքում, հայ ժողովուրդը այդ տարի վերջապես կարողացավ անկախություն նվաճել: Մայիսի 26-ին Սարդարապատում հաղթանակելով թուրքական բանակին, հայկական զորքերը կարողացան կասեցնել թուրքական ներխուժումը Հարավային Կովկաս եւ փրկել Հայաստանը լիակատար ոչնչացումից: Հայկական հանրապետությունը հռչակվեց Հայկական ազգային խորհրդի կողմից 1918թ. մայիսի 28-ին Թիֆլիսում: Սակայն Հայաստանի Հանրապետությունը գոյություն ունեցավ ընդամենը երկու տարի: 1920թ. դեկտեմբերի 2-ին Երեւան մտան 11-րդ Կարմիր բանակի զորամասերը եւ հանրապետությունում հաստատվեցին խորհրդային կարգեր:

Անկախության երկու տարիները վիթխարի բարոյական նշանակություն ունեցան: Դա այն ժամանակն էր, երբ անցնելով Ցեղասպանության արհավիրքները, Հայաստանը կռվեց վիթխարի կայսրության դեմ ազգ լինելու եւ ազգ մնալու իրավունքի համար: Եվ հաղթեց, մնաց որպես ազգ: Թեպետ յոթ տասնամյակ անց ստիպված կրկին պայքարելու էր ազգ լինելու եւ ազգ մնալու իրավունքի համար: Անցնելու էր ավերիչ երկրաշարժ, վերածնվելու ղարաբաղյան կռիվներով: Եվ կրկին հաղթեց, քանի որ կրկին նահանջելու տեղ չուներ, իրավունք չուներ, որովհետեւ միայն այդ ձեւով ողջ աշխարհին կարող էր ապացուցել պատմական ազգ լինելու օրինական իրավունքը:

# ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

*ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Վրաստանի օրվա առթիվ շնորհավորական ուղերձ է հղել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն:*



Ուղերձում ԱՄՆ նախագահը շեշտել է երկու երկրների միջեւ ռազմավարական գործընկերությունը եւ արտահայտվել Վրաստանի աջակցության օգտին:

«Թանկագին վարչապետ, լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Ձեզ եւ վրաց ժողովրդին մայիսի 26-ի՝ Վրաստանի անկախության օրվա առթիվ:

Մեր երկրները կապված են ամուր, ակտիվ եւ ռազմավարական գործընկերությամբ: Ամերիկայի Միացյալ Նահանգները հպարտանում են նրանով, որ անցյալ տարիներին պաշտպանեցին Վրաստանը, երբ ձեր երկրում անցկացվեցին տեղական ընտրությունները, ստո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

# ՌԻԳԱ. ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԻՏՈՒՄԸ



*Մայիսի 21-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած պատվիրակությունը մեկնեց Ռիգա «Արեւելյան գործընկերության» չորրորդ գագաթաժողովի աշխատանքին մասնակցելու համար:*

Պատվիրակության կազմում են Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն, արտաքին գործերի նախա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՎՍՏՐԻԱ

# ՁԵՎԱԿԵՐՊԵՑԻՆ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

*Մայիսի 18-19-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Ավստրիայի նախագահ Հայնց Ֆիշերը՝ տիկնոջ Մարգարետ Ֆիշերի հետ միասին:*

Ավստրիայի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ Վրաստանի նախագահի նստավայրում:

Պաշտոնական արարողության ավար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

*Մայիսի 17-ին, մեկօրյա աշխատանքային այցով, Բաթումիում էր գտնվում Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը:*

Այցի շրջանակներում տեղի ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Հովիկ Աբրահամյանի հանդիպումը:

Երկու երկրների կառավարությունների ղեկավարների առանձնազրույցի ընթացքում կողմերը կարեւորեցին փոխգործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրերը, անդրադարձան վրացհայկական բարեկամական ու բարիդրացիական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցերի:

Իրակլի Ղարիբաշվիլին եւ Հովիկ Աբրահամյանը քննարկել են երկկողմ տնտեսական համագործակցության զարգացմանն ու խորացմանն առնչվող մի շարք հարցեր՝ կարեւորելով տարբեր ոլորտներում փոխգործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրերը:



Հանդիպման ավարտից հետո Վրաստանի եւ Հայաստանի վարչապետերը շրջել են Բաթումիի ծովափնյա բուլվարում:

# ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՎՐԱՑԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Հայաստանի էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը, որը Թբիլիսիում էր գտնվում վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի ամենամյա հանդիպման կապակցությամբ, քննարկեցին երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունների հեռանկարներն ու կարեւորեցին դրանց ակտիվացումը:*



Կողմերը քննարկեցին նաեւ Հայաստանից ժամանող զբոսաշրջիկների համար Վրաստանի գրավչության հարցը:

Նշենք, որ Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության տվյալներով, 2013-2014 թվականներին Վրաստանում իրականացվել է 20,13 միլիոն ԱՄՆ դոլարի հայկական ներդրում, ընդ որում 2013 թվականի համեմատությամբ, ներդրումների աճը կազմել է 139 տոկոս:

2015 թվականի հունվարի 1-ի տվյալներով, հայաստանյան կապիտալը ներդրվել է Վրաստանում գործող 548 արտադրություններում:

Ինչ վերաբերում է զբոսաշրջության ոլորտին, ապա 2014 թվականին Հայաստանից Վրաստան է ժամանել 1325,635 զբոսաշրջիկ, ինչը 2,6 տոկոսով գերազանցում է 2013 թվականի ցուցանիշը:

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

# ՌԻԳԱ. ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԵԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԻՏՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րար Թամար Բերուչաշվիլին:

Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի եւ եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցի, Լատվիայի նախագահ Անդրիս Բերձինշի, Իտալիայի վարչապետ Մաթեո Ռենցի, Շվեդիայի վարչապետ Ստեփան Լեվենի, Բելգիայի վարչապետ Շառլ Միշելի, Խորվաթիայի վարչապետ Զորան Միլանովիչի, Սլովենիայի վարչապետ Միրո Ցերարի, Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովի, Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասի հետ: Ռիգա կատարած այցի շրջանակներում Իրակլի Ղարիբաշվիլին մասնակցեց նաեւ Եվրոպայի ժողովրդական կուսակցության գագաթաժողովին:

Կայացած հանդիպումներում Վրաստանի վարչապետին եվրոպական գործընկերները կրկին հավաստեցին իրենց պատրաստակամությունը՝ աջակցելու Վրաստանի եվրաինտեգրման կուրսին: Մասնավորապես, Ֆրանսուա Օլանդի հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների խորացման հետ առնչվող հարցեր: Կողմերը քննարկեցին նաեւ Վրաստանին անայցեգրային պայմանակարգի շնորհման հնարավորությունները:

Վրաստանի վարչապետի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանում իրականացվող բարեփոխումներին: Կողմերն ընդգծեցին նաեւ վերջին երկու տարիներին վրաց-գերմանական երկկողմ հարաբերությունների զարգացման առաջընթացը: Ինչպես հայտարարեց Անգելա Մերկելը, Գերմանիան կշարունակի ակտիվորեն պաշտպանել Վրաստանի եվրոպական ուղին ու ընտրությունը:




Հանրագումարելով Ռիգայում անցկացրած հանդիպումները, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հույս հայտնեց, որ Վրաստանի քաղաքացիները մոտ ժամանակներս կկարողանան օգտվել Եվրոպայի հետ անայցեգրային պայմանակարգից: Նրա խոսքերով, եվրաինտեգրման ուղղությամբ Վրաստանի առաջընթացն արձանագրվել է եվրոպական բոլոր լիդերների կողմից: «Բոլորը միաձայն նշում են, որ Վրաստանը նշանակալի առաջընթացի է հասել: Բոլորը համաձայն են նաեւ այն հարցում, որ իրականացված բարեփոխումներում ձեռք բերած առաջընթացի հաշվառմամբ, Վրաստանի քաղաքացիներն արժանի են նրան, որ օգտվեն Եվրոպայի հետ անայցեգրային պայմանակարգից»,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանի եւ Եվրամիության միջեւ անայցեգրային պայմանակարգի հաստատման վերաբերյալ քաղաքական որոշումը, փաստորեն, ընդունվել է, մնացել են միայն տեխնիկական ընթացակարգերը:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՎՍՏՐԻԱ

# ՁԵՎԱԿԵՐՊԵԾԻՆ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տից հետո տեղի ունեցավ Վրաստանի եւ Ավստրիայի նախագահների առանձնազրույցը, որին հաջորդեցին պատվիրակությունների կազմով բանակցությունները: Հանդիպման օրակարգի շրջանակներում քննարկվեցին անվտանգության հետ առնչվող հարցեր, Վրաստանի եւ Ավստրիայի նախագահներն անդրադարձան Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակին: Հանդիպմանը կողմերը քննարկեցին նաեւ Եվրամիության եւ Վրաստանի միջեւ երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր:



Ավստրիայի նախագահի՝ Վրաստան կատարած այցի շրջանակներում երկու երկրների միջեւ ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր: Պայմանագրեր ստորագրվեցին զբոսաշրջության, գյուղատնտեսության, էներգետիկայի ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Անցկացվեց նաեւ վրաց-ավստրիական բիզնես-ֆորում:

Մայիսի 19-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Ավստրիայի նախագահ Հայնց Ֆիշերի հետ: Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Ավստրիայի նախագահ Հայնց Ֆիշերը այցելեց եւ ծաղկեպսակ դրեց Վրաստանի միասնության համար զոհված հերոսների հուշահամալիրին:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՐՁՐԱԼԵՌ ԳՈՏՈՒ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

***Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, ներկայացնելով կառավարության ծրագիրը, նշեց, որ հարկային արտոնություններ են նախատեսվում այն ձեռներեցների համար, ովքեր ծրագրում են գործն սկսել բարձրալեռ տարածաշրջաններում:***

Վարչապետի խոսքերով, համապատասխան օրինանախագիծը մոտ ժամանակներս կներկայացվի խորհրդարանի քննարկմանը: «Մեր կառավարությունը, բարձրալեռ տարածաշրջաններում բնակիչներին տեղում պահելու եւ կենսամակարդակի բարձրացման նպատակով, ծրագրում է այդ երկրամասերում տնտեսական գործունեության խրախուսման միջոցառումների անցկացում: Մասնավորապես, ձեռներեցները, ովքեր բարձրալեռ գոտում կսկսեն տնտեսական գործունեություն, որոշակի պայմաններով եւ ժամկետում կազատվեն եկամտահարկից ու գույքահարկից»,- հայտարարեց վարչապետը:

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

# ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րագրվեց Եվրոպայի հետ ասոցիացման համաձայնագիրը եւ Վրաստանը ստացավ ՆԱՏՕ-ի էական փաթեթը: Մենք այսօր էլ աջակցություն ենք հայտնում Վրաստանի ժողովրդավարական եւ տնտեսական զարգացմանը, ինչը նշանակալից է եվրատլանտյան ինտեգրման եւ առեւտրական ու ներդրումային նոր հնարավորությունների ապահովման համար:

Տարածաշրջանում իրադարձությունների լիարժեք մարտահրավերների ֆոնի վրա մենք պաշտպանում ենք Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակներում: Մենք հպարտանում ենք մեր համատեղ ջանքերով, ուղղված Վրաստանում ժողովրդավարության եւ գլոբալ անվտանգության ամրապնդմանը: Մենք գնահատում եւ հարգում ենք ձեր զինծառայողներին, որոնք մասնակցում են Աֆղանստանում եւ աշխարհի մյուս տարածաշրջաններում առաքելություններին: Մենք երախտապարտ ենք Վրաստանին այն ներդրման համար, որն այն իրականացնում է գլոբալ խաղաղության ու անվտանգությանը սպառնալիք ստեղծող ահաբեկչության եւ մյուս մարտահրավերների դեմ պայքարում: Ի սրտե շնորհավորում ենք անկախության օրվա առթիվ»,- ասված է Բարաք Օբամայի շնորհավորական ուղերձում:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***Հայաստանի գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Արմեն Հայրապետյանը, մայիսի 18-19-ին, աշխատանքային այցով գտնվում էր Վրաստանում:***

Թբիլիսիում նա հանդիպում ունեցավ Վրաստանի գյուղատնտեսության նախարարության պարենի ազգային գործակալության պետ Զազա Դոլիձեի հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՍԱՊԾ անասնաբուժության տեսչության պետ Հովհաննես Մկրտչյանը, Վրաստանի պարենի ազգային գործակալության պետի տեղակալ Իրակլի Չավլեշվիլին եւ ֆիտոսանիտարիայի վարչության պետ Զուրաբ Լիպարտիան:

Վրաց գործընկերների հետ քննարկվել են անասնաբուժական եւ ֆիտոսանիտարական ենթահսկման բեռների արտահանման, ներմուծման եւ տարանցիկ փոխադրմանն առնչվող հարցեր: Մասնավորապես, անդրադարձել են Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո ի հայտ եկած նոր մոտեցումներին ու փոփոխություններին, որոնք վերաբերում են անասնաբուժական եւ ֆիտոսանիտարական ենթահսկման բեռների տեղափոխման կարգին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ աշխատանքներ իրականացնել հայ-վրացական սահմանով սննդամթերքի տարանցիկ փոխադրումն առավել համակարգված կազմակերպելու համար:

Հանդիպման ընթացքում հայ եւ վրացի գործընկերները քննարկել են նաեւ սննդամթերքի անվտանգության բնագավառում երկկողմ համագործակցությունը զարգացնելու եւ ամրապնդելու հնարավորությունները:



ՈՒԿՐԱԻՆԱ

## «ՄԻՆՍԿ-2»-Ի ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ ԵՆ

*Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն հայտարարել է, որ Ռիգայում Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի եւ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հետ հանդիպմանը կողմերը համաձայնեցրել են այն գործողությունները, որոնք թույլ կտան իրագործել Մինսկի պայմանավորվածությունները:*

*«Գերմանիայի եւ Ֆրանսիայի ղեկավարները համաձայնեցրին եւ կոորդինացրին մեր գործողությունները այն քայլերի առումով, որոնք կապահովեն Մինսկի համաձայնությունների անշեղ կատարումը, ընդ որում ոչ թե որեւէ մեկ առանձին կետի, այլ ամբողջ ծրագրի, որն ստորագրվել էր փետրվարի 12-ին»,- ասաց Պորոշենկոն:*

*Ուկրաինայի նախագահը մայիսի 22-ին Ռիգայում հանդիպում է անցկացրել նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնի հետ: Այլ հարցերի թվում քննարկվել են խաղաղապահ առաքելության ներգրավման հնարավորությունը Դոնբասի հակամարտության կարգավորման համար: Պորոշենկոն նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետին իրազեկել է Մինսկի համաձայնությունների կատարման ընթացքի եւ երկրի արեւելքի վերջին իրադարձությունների մասին:*

*Քեմերոնը Պորոշենկոյին հավաստիացրել է, որ Ուկրաինան այսուհետեւ էլ կարող է ակնկալել Մեծ Բրիտանիայի աջակցությունը:*

ՍԻՐԻԱ

## ԳՆԴԱԿՈԾՎԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ

*Մայիսի 19-ին գնդակոծվել է Դամասկոսում Ռուսաստանի դեսպանատան շենքը:*

*«Ենթադրաբար, կրակը բացվել է Ջոբար շրջանից, որը կառավարվում է անօրինական զինված խմբավորումների կողմից: Մի ականը պայթել է մեր դիվանագիտական ներկայացուցչության գլխավոր դարպասներից 15 մետր հեռավորության վրա, մյուսը՝ հարվածելով արտաքին պատին, դիպել է դեսպանատան ծառայողական շենքի աշխատասենյակին»,- ասված է ՌԴ ԱԳՆ պաշտոնական հաղորդագրության մեջ:*

*Երջանիկ պատահականությամբ դեսպանատան որեւէ աշխատակից չի տուժել: Դեսպանատան շենքին հասցվել է նյութական վնաս:*

ՂՐՂԶՍՏԱՆ

## ՄԻԱՑԱՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

*Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Աթամբաեւն ստորագրել է Եվրասիական տնտեսական միությանը հանրապետության միանալու մասին օրենքը: Մայիսի 20-ին համապատասխան պայմանագրերի վավերացման մասին փաստաթուղթն ընդունել էր երկրի խորհրդարանը:*

*Հիշեցնենք, որ Եվրասիական տնտեսական միության ստեղծման պայմանագիրը Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի նախագահների կողմից ստորագրվել է 2014 թվականի մայիսին: Այն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ին: Հունվարին դրան միացել է Հայաստանը:*

ՆԵՊԱԼ

## ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ԹԻՎՆ ԱՃՈՒՄ Է

*Նեպալում ապրիլի 25-ին եւ մայիսի 12-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերի զոհ է դարձել 8 հազար 622 մարդ: Այդ մասին հաղորդել է Արտակարգ իրավիճակների ազգային կենտրոնը: Ավելի վաղ նշվում էր 8 հազար 583 զոհվածների մասին:*

*Ըստ վերջին տվյալների՝ վիրավորվել է 16 հազար 808 բնակիչ: Նեպալի մայրաքաղաք Կատմանդուում զոհվել է 1216 մարդ: Ավելի քան 490 հազար շենք ամբողջովին ավերված է:*

Ճաքաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՑ

## ԻՍՊԱՆԻԱՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԿՈՒՐՍԻՆ

*Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին պաշտոնական այցով գտնվում է Իսպանիայում:*

Այցի շրջանակներում խորհրդարանի խոսնակը հանդիպում ունեցավ Իսպանիայի կոնգրեսի նախագահ Հեսուս Պոսադայի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների օրենսդրական մարմինների միջեւ համագործակցության խորացման, երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Հանդիպման ավարտից հետո Դավիթ Ուսուփաշվիլին լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ իսպանական կողմը հստակորեն նշեց եվրաինտեգրման հարցում Վրաստանի աջակցությանն ուղղված իր դիրքորոշումը: «Իսպանիայի դիրքորոշումը հստակ եւ անփոփոխ է նաեւ Վրաստանի տարածքային ամբողջականության հարցում: ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպությունների մասշտաբով Վրաստանի տարածքային ամբողջականության կապակցությամբ Իսպանիայի դիրքորոշումը մեծ նշանակություն ունի, քանզի այն վիթխարի ազդեցություն ունի աշխարհում»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:



ՕՐԵՆՍԴԻՐ

## ՇՈՒՐՋ 1 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ

***Մայիսի 21-ին Վրաստանի խորհրդարանի բնապահպանության, տարածաշրջանային քաղաքականության եւ ագրարային հարցերով կոմիտեների միացյալ նիստում քննարկվեց 2015 թվականի առաջին եռամսյակի պետբյուջեի կատարման հաշվետվությունը:***

Վրաստանի ֆինանսների նախարարության կողմից ներկայացված հաշվետվության համաձայն, եկամուտների հարցով առաջին եռամսյակի առաջադրանքը կատարվել է 104,7 տոկոսով, ծախսերի առաջադրանքը՝ 97 տոկոսով:

2015 թվականի մարտի 31-ի տվյալներով, Վրաստանի ինքնավար հանրապետությունների եւ տեղական ինքնակառավարման մարմիններին տարեկան ֆինանսական օգնության կարգով տրվել է 999336,2 հազար լարի:

Տեղական ինքնակառավարման մարմիններին նախագծերի հիմնադրամի շրջանակներում տարեկան պլանով փոխանցվել է 86409,2 հազար լարի:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ՆՈԴԱՐ ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ. «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԶԳԱԼԻՈՐԵՆ ՆՊԱՍՏՈՒՄ Է ԼԱՐԻԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆԸ»



Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Նոդար Ջավախիշվիլին հայտարարեց, որ ենթակառուցային նախագծերի իրականացումը նշանակալի ավանդ է ներդնում լարիի կայունացման վրա, քանզի դա նպաստում է արտասահմանյան տարադրամի ներհոսքին: «Ենթակառուցային նախագծերի նշանակալից մասը ֆինանսավորվում են օտարերկրյա դոնորների կողմից, ինչը նրա երաշխիքն է, որ երկիր մուտք գործեն համապատասխան գումարներ: Այդ գումարի նշանակալից մասը կծախսվի լարիի տեսքով: Բացի այդ, ենթակառուցային նախագծերն ինքնին դրական ազդեցություն են գործում երկրի էկոնոմիկայի զարգացման վրա»,- հայտարարեց Նոդար Ջավախիշվիլին:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն մասնակցեց Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի դպրոցների եւ բուհերի ցանցին նվիրված խորհրդաժողովին:***

Աշխատանքային երեք օրերի ընթացքում խորհրդաժողովի մասնակցները քննարկեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք էին հանրային քաղաքականությունը, էլեկտրոնային կառավարումը, հանրային ֆինանսները եւ դրանց կառավարումը, հանրային հաստատությունների բարեփոխումները:

Խորհրդաժողովին մասնակցում էին ավելի քան 30 երկրների շուրջ 300 ներկայացուցիչներ, այդ թվում՝ փորձագետներ, պրոֆեսորներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, պաշտոնական անձինք:

Թամար Սանիկիձեն իր խոսքում նշեց, որ Վրաստանն այսօր կանգնած է բազում մարտահրավերների առջեւ եւ Եվրամիության հետ ասոցիացիան դրանց կարգավորման կարեւորագույն միջոցներից մեկն է: «Մենք պարտավոր ենք պատասխանել հանրային կառավարման արդիականացմանը, պետական սպասարկումների զարգացմանն ու դրանց մատչելիության ապահովմանն ուղղված մարտահրավերներին, ինչը վերջին հաշվով հանրային կառավարումը նպատակամղելու է մարդու եւ նրա պահանջմունքների բավարարման ուղղությամբ»,- հայտարարեց Վրաստանի կրթության նախարարը:

## «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ, ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

***Մայիսի 22-ին Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան բացեց «Քաղաքաշինություն, ենթակառույց, կայուն զարգացում» միջազգային խորհրդաժողովը:***



Խորհրդաժողովի կազմակերպիչներն են Թբիլիսիի զարգացման հիմնադրամը, քաղաքի ճարտարապետական ծառայությունը, «Georgia Builds» ընկերությունը, Եվրոպայի ճարտարապետական ցանցը (ENA) եւ Թբիլիսիի էներգետիկայի գործակալությունը:

Խորհրդաժողովի մասնակիցները քննարկեցին Թբիլիսիի զարգացման տարբեր ուղղությունները, այդ թվում՝ ջրամատակարարման եւ ենթակառույցների համակարգերի վերանորոգման ներդրումային հիմնադրույթը:

Ինչպես հայտարարեց Դավիթ Նարմանիան, կազմվել է քաղաքի մի շարք տարածքների վերակառուցման նախագիծը եւ գործընկերների հետ միասին սկսվել է ապագա քաղաքի հիմնադրույթի մշակումը: Աշխատանքներ են տարվում նաեւ քաղաքի գլխավոր նախագծի հստակեցման ուղղությամբ: Նա խոսեց նաեւ կոնկրետ նախագծերի մասին:

Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցում է Եվրոպայի ճարտարապետական ցանցի նախագահ Ուրբան Քնապը:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

## ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Մայիսի 11-ին Թբիլիսիի մերձակա Վազիանի օդանավակայանի տարածքում վրաց-ամերիկյան «Արժանի գործընկերություն» զորավարժությունների շրջանակներում կայացել են տակտիկական դաշտային վարժանքներ գումարտակի մակարդակով:***

Վարժանքներին մասնակցել են վրացի եւ ամերիկացի 300 զինվորականներ: Դրանց ընթացքին հետեւել է ԱՄՆ-ի բանակի 173-րդ դեսանտային բրիգադի հրամանատար գնդապետ Մայքլ Ֆոսթերը:

Վարժանքների սցենարին համապատասխան, պայմանական հակառակորդը դիրքեր է գրավել բնակավայրում եւ գրավել օդանավակայանը: Վրաց-ամերիկյան ստորաբաժանման խնդիրը գրոհով հակառակորդին բնակավայրից եւ օդանավակայանից դուրս մղելն էր եւ գործողության շրջանում հաստատվելը:

Վարժանքներին մասնակցել են հետեւակի «Բրեդլի» ամերիկյան մարտական մեքենաներ եւ վրացական ԿՍՄ-2 հետեւակի մարտական մեքենաներ:

Զորավարժություններն սկսվել են մայիսի 11-ին եւ կավարտվեն մայիսի 24-ին: Դրանց մասնակցում են վրացի ու ամերիկացի 600 զինծառայողներ: Վրացական կողմից վարժանքներում գործի է դրված առաջին հետեւակային բրիգադի 12-րդ գումարտակի «Ալֆա» վաշտը, չորրորդ մեքենայացված բրիգադի 42-րդ գումարտակի առաջին մեքենայացված վաշտը եւ զինվորական ոստիկանության մի դասակ:



### ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆԱԽԱԳԾԵՐԸ

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Բաթումիում Աջարիայի կառավարության անդամների ու մունիցիպալիտետների ղեկավարների հետ, քննարկեց տարածաշրջանում իրականացվող եւ իրականացվելիք նախագծերը եւ զբոսաշրջության սեզոնի նախապատրաստության հետ առնչվող հարցերը: Վարչապետը խոսեց նաեւ «Ուժեղ տարածաշրջան, ուժեղ Վրաստան» կառավարական ծրագրերի մասին եւ տեղի իշխանություններին կոչ արեց առավելագույն աջակցություն ցուցաբերել գործարարներին: Ինչպես նշեց Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարական նախագիծն ուղղված է տարածաշրջանների ռազմավարական եւ տնտեսական զարգացմանը, պարապուրդի եւ անտեսության մատնված ձեռնարկությունների վերականգնմանն ու տարածաշրջանի բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը:*

### «ԽՎԱՆՃԿԱՐԱՆ» ԳՐԱՆՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հայաստանի մտավոր սեփականության գործակալությունը գրանցման վկայականներ է հանձնել վրացական վեց արտադրական տեսականուն: Հայաստանի Հանրապետության տարածքում «Ծինանդալի», «Ախաշենի», «Քինձմարաուլի», «Խվանճկարա», «Մանավի» եւ «Մուկուզանի» տեսականու բացառիկ իրավունքը վերապահվել է «Գինու ազգային գործակալություն» ՀԻԻԱ-ին: Վրաստանի մտավոր սեփականության ազգային կենտրոնը՝ Սաքպատենտը վերոնշյալ տեսականու հարցով, Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությանը դիմել էր մեկ տարի առաջ, ինչը սահմանված ընթացակարգի անցումից հետո հաստատվեց:*

*«Վերոնշյալ տեսականու պաշտպանությունը կնպաստի Հայաստանի տարածքում վրացական արտադրանքի կեղծման եւ դրա ապօրինի օգտագործման կանխմանը»,- նշված է Սաքպատենտի հաղորդագրության մեջ:*

### ՄՏԱԴԻՐ ԵՆ ԳՆԵԼ ԷԼԵԿՏՐԱՄՈԲԻԼՆԵՐ

*Ճապոնիան 500 միլիոն ճապոնական իենի (մոտավորապես 4,2 միլիոն դոլարի) չափով ոչ նախագծային դրամաշնորհային օգնություն կցուցաբերի Վրաստանին:*

*Այս ոչ նախագծային դրամաշնորհային օգնությունը նպատակամղված է նոր սերնդի էկոավտոմոբիլների, օրինակ, այնպիսի ավտոմոբիլների ձեռքբերման համար, ինչպիսիք են հիբրիդային ավտոմոբիլը (HV), լրալիցքավորման հնարավորությամբ հիբրիդային ավտոմոբիլը (PHEV), էլեկտրամոբիլը (EV) եւ մաքուր դիզելով աշխատող փոխադրամիջոցը (CD):*

*Հիշյալ դրամաշնորհային օգնության իրագործումը պետք է նպաստի Վրաստանի բնապահպանական իրադրության բարելավմանը:*

*Ճապոնիան, համագործակցելով Վրաստանի կառավարության հետ, զարգացման պաշտոնական օժանդակման (ODA) շրջանակներում իրականացրել է տարբեր ուղղվածության ծրագրեր: Վրաստանի համար այդ օգնությունը, որը կազմում է 370 միլիոն դոլար, ընդգրկում է այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են տնտեսական ենթակառուցվածքի բարելավումը, գյուղատնտեսությունը եւ սոցիալական հատվածը, մշակույթը եւ մարդկային ռեսուրսների զարգացումը:*

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ ՄԱՐՎՈՒՄ ԵՆ

*Էներգետիկայի եւ ջրամատակարարման հարցերով ազգային հանձնաժողովը քննարկել է սխալ գրանցված կոմունալ հարկադրման հարցով բնակչության բողոքները եւ մարել 44 912,86 լարիի պարտքը: Բողոքները հիմնականում վերաբերում էին «Թելասի» եւ «ՂազՏրանսԳազ-Թբիլիսի» ընկերություններին:*

ԿՐԹԱԿԱՆ

# ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՇՐՋԱՆ. ԲՈՒՂԱՇԵՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ ԱՌԱՋԻՆՆ Է ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Ախալքալաքիի մունիցիպալիտետի Բուղաշեն գյուղում կառուցվել է Վրաստանում առաջին էներգաարդյունավետ հանրային դպրոցը:*



Մայիսի 17-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն նախարարության ենթակառույցային ծառայության եւ Ախալքալաքիի ինքնակառավարման ներկայացուցիչների հետ միասին, այցելեց Բուղաշեն եւ դպրոցի աշակերտներին ու մանկավարժներին շնորհավորեց նոր կրթօջախի բացման առթիվ:

120 աշակերտի համար նախատեսված դպրոցի շինարարությունը կենսական նշանակություն ուներ գյուղի համար, քանի որ նախկին դպրոցը վթարային վիճակում էր եւ սպառնալիք էր ստեղծում աշակերտների համար: Աշակերտների անվտանգության ապահովման նպատակով, ծագեց աշակերտներին շենքի անվտանգ հատված տեղափոխելու վթարային հատվածը լրիվությամբ մեկուսացնելու անհրաժեշտությունը: Բուղաշենի նոր դպրոցը կառուցվել է անհամեմատ բարվոք ու մատչելի վայրում:

Ախալքալաքիի շրջանում ձմռանը սառնամանիքները հասնում են 30 աստիճանի: Ելնելով դրանից, Բուղաշենի հանրային դպրոցը առաջինն է այն կրթօջախների թվում, որոնց շինարարության համար օգտագործվել է էներգաարդյունավետ շինանյութ, որը կտնտեսի էներգիան եւ կնպաստի ջեռուցման համար իրականացվող ծախսերի նվազեցմանը:



Դպրոցը հարմարված է հատուկ կրթության կարիք ունեցող աշակերտների համար, հանդերձավորված է արդի դպրոցական ու գրասենյակային գույքով, ունի ժամանակակից ջեռուցման համակարգ, գրադարան, բժշկական կաբինետ ու բաց մարզադաշտ:

Սկսած 2013 թականից մինչ օրս Վրաստանում իրականացվել է 9 հանրային դպրոցի եւ մեկ մասնագիտական ուսումնարանի շինարարություն: Ընթացքի մեջ են 11 հանրային դպրոցների շինարարության եւ 18 հանրային դպրոցների նախագծման աշխատանքները: Վերոնշյալ ցուցակից չորս հանրային դպրոցի շինարարությունն սկսվել է 2015 թվականին, իսկ մնացած 14-ի շինարարությունը կմեկնարկի 2016 թվականին:

Ընթացիկ տարվա սկզբից, վերանորոգման աշխատանքներ են իրականացվել 1089 հանրային դպրոցներում, մինչեւ նոր ուսումնական տարին վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն եւս 225 հանրային դպրոցներում, կկարգավորվեն 100 բուժկետեր, 187 դպրոցներում ընթացքի մեջ է բժշկական կաբինետների կարգավորումը:

Դպրոցի բացմանը ներկա էին նաեւ Ախալքալաքիի մունիցիպալիտետի վարչության եւ սակրեբուլոյի նախագահներ Էդուարդ Աղասարյանն ու Համլետ Մովսիսյանը, շրջանի ռեսուրս-կենտրոնի ղեկավար Նարգիս Կարապետյանը:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող*

# ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վրաստանի հանրային դպրոցների 11-րդ դասարանի աշակերտների համար պետական քննությունները կմեկնարկեն հունիսի 16-ից:*

Վրաստանի կրթության նախարար Թամար Սանիկիձեի կարգադրությամբ, քննությունները կանցկացվեն չորս առարկաներով. հունիսի 16-ին՝ աշխարհագրություն, հունիսի 17-ին՝ կենսաբանություն, հունիսի 18-ին՝ ֆիզիկա, հունիսի 19-ին՝ քիմիա: 12-րդ դասարանի աշակերտները ավարտական քննությունները կհանձնեն մայիսի 21, 22, 23, 24-ին: Նշված օրը հարգելի պատճառով քննության չներկայացած աշակերտներին կտրվի հնարավորություն քննությունը հանձնել պահեստային՝ մայիսի 25-ին:

Հիշեցնենք, որ 2013 թվականից 11 եւ 12-րդ դասարանի աշակերտների համար ավարտական քննությունները անցկացվում են երկու փուլով: 11-րդ դասարանի աշակերտները ուսումնական տարվա վերջին հանձնում են այն առարկաների քննությունները, որոնց ուսուցումն ավարտվում է (աշխարհագրություն, կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա): Մնացած չորս քննությունները՝ մաթեմատիկայի, վրաց լեզվի եւ գրականության, օտար լեզվի եւ պատմության առարկաներով աշակերտները հանձնում են դպրոցն ավարտելուց հետո: Նշենք, որ ավարտական քննություններին մասնակցում է շուրջ 45 հազար աշակերտ:

# ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ֆինանսավորմամբ, Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանի ուսանողների եւ դասախոսների համար Ախալքալաքիում սկսվել են հյուրանոցի տիպի հանրակացարանի վերանորոգման աշխատանքները:*



Մայիսի 15-ին իրականացվող աշխատանքները դիտելու համար, տարածաշրջանում էր գտնվում Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն: Նա համալսարանի ռեկտորի եւ տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հետ եղավ շինարարական օբյեկտում:

Բուհի ենթակառուցյային զարգացման նախագծի շրջանակներում, տարածաշրջանային բուհի վերականգնումը նախարարության առաջնահերթությունն է: Ինչպես նշեց նախարարը, այդ առաջնահերթությունների թվին է պատկանում Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանը, որի ուսումնական մասնաշենքերը գործում են Ախալցիխեում եւ Ախալքալաքիում:

Ուսումնական նոր տարվանից համալսարանում կգործարկվեն տարածաշրջանի համար առաջնահերթային մի շարք նախագծեր, ինչը կնպաստի Վրաստանի տարբեր երկրամասերից Ախալքալաքիում ուսանող երիտասարդության գրավմանը: Ելնելով դրանից, նշանակալից է քաղաքում ուսանողական ժամանակակից հանրակացարանի առկայությունը: Հատկանշական է նաեւ այն, որ տեղում չկա ակադեմիական կարգ ունեցող անձնակազմ, մանկավարժ-դասախոսների ողջ կազմն ամեն օր Ախալքալաքի էր ժամանում Ախալցիխեից: Վերանորոգված ժամանակակից հանրակացարանը կնպաստի նաեւ ակադեմիական անձնակազմի համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

# ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության իրավասություններն ընդլայնվում են: Նախարարությանն է վերապահվում ինքնուրույն սահմանելու համակարգում ներառված հանրային իրավունքի իրավաբանական անձանց կողմից կրթության ոլորտում իրականացված սպասարկումների, գործունեության սակագինը:*

Բացի այդ, քննությունների հետ կապված, անհրաժեշտության դեպքում, կրթության նախարարությանը վերապահվում է իրավունք սահմանելու Վրաստանի ընդհանուր վարչարարական օրենսգրքով նախատեսված իրավախախտումներից տարբերվող վարչական բողոքների ժամկետների, դրանց ներկայացման կարգի ու քննարկման ընթացակարգերը: «Ընդհանուր վարչարարական օրենսգրքով սահմանված ժամկետներն ու բողոքարկման կարգը, գործնականում անհնարին է իրականացնել քննական արդյունքների հարցով»,- պարզաբանվում է գերատեսչության հայտարարության մեջ:

Այդ հարցով փոփոխություններ են կատարվելու «Ընդհանուր կրթության մասին» օրենքում, որը կրթության նախարարության հեղինակությամբ եւ կառավարության նախաձեռնությամբ, արդեն ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՄԵՆՔ ՍԿՍԵԼ ԵՆՔ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ»

*Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ իր գլխավորած գերատեսչությունում արդեն աշխատում են բյուջեի վերանայման հարցով:*



Նրա խոսքերով, վարչարարական ծախսերը զգալիորեն նվազեցվել են եւ, միաժամանակ, բյուջեն ոչ մի ազդեցություն չի գործի լարիի կուրսի վրա: «Չնայած նրան, որ տնտեսական աճի ցուցանիշի առումով մեզ մոտ ամենաբարձր մակարդակն է տարածաշրջանում, սակայն, ցավոք, այն 5 տոկոսին չի հասնում: Տնտեսական աճի կանխագծված մակարդակից ցածր ցուցանիշի պատճառով էլ մենք սկսել ենք աշխատանքը բյուջեի վերանայման հարցով: Կրկին ցանկանում եմ հավաստել, որ դա սոցիալական նախագծերին չի անդրադառնա: Մենք աշխատում ենք նաեւ, որպեսզի բյուջեն վերածվի ֆինանսական կայունության երաշխիքի եւ տնտեսական աճի խթանման գործոնի»,- հայտարարեց նախարարը:

Անդրադառնալով լարիի կուրսի վերջին ժամանակներս գրանցված ամրացմանը, ֆինանսների նախարարը հույս հայտնեց, որ լարիի ամրացումը կշարունակվի եւ երկրում ծավալվող գործընթացները դրան կնպաստեն:

«Մեր գլխավոր խնդիրն է լարիի կայուն ամրապնդումը եւ երկրում ֆինանսական կայուն միջավայրի հաստատումը»,- ընդգծեց Նոդար Խադուրին:

# ՀԻՆԳ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ

*Համաշխարհային բանկի կողմից Վրաստանը մունիցիպալային ենթակառույցների եւ սպասարկումների բարելավման համար կստանա 5 միլիոն դոլարի դրամաշնորհ:*




Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ֆինանսների նախարարությունը, Վրաստանի եւ Համաշխարհային բանկի միջեւ ձեւակերպվել է դրամաշնորհային համաձայնագիր, որը ստորագրել են ֆինանսների գերատեսչության ղեկավար Նոդար Խադուրին եւ Հարավային Կովկասում բանկի տարածաշրջանային տնօրեն Հենրի Քերալը: Համաձայնագրի ստորագրմանը ներկա էր մունիցիպալային զարգացման հիմնադրամի տնօրեն Իլիա Դարչիաշվիլին:

Փաստաթուղթը նախատեսում է Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության կողմից, Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ 5 միլիոն դոլարի հատկացմանը, «Տարածաշրջանային եւ մունիցիպալային ենթակառույցների զարգացման երկրորդ նախագծի» շրջանակներում ծրագրված միջոցառումների ֆինանսավորման համար:

Նշենք, որ վերոնշյալ նախագծի շրջանակներում Համաշխարհային բանկն արդեն հատկացրել է 30 միլիոն դոլար:

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

*Եվրամիությունը Վրաստանին օգնության համար կհատկացնի ֆինանսական նոր փաթեթ:*

Այդ մասին հայտնի դարձավ Լյուքսեմբուրգում Վրաստանի արտաքին գործերի նախարարի եւ Եվրամիության արտաքին գործերի նախարարների աշխատանքային հանդիպմանը: ԱԳ նախարարության տեղեկատվությամբ, լրացուցիչ միջոցները կծառայեն Վրաստանում ձեռներեցության զարգացմանը եւ այն հնարավորությունների բարելավմանը, որոնք կապված են Եվրամիության հետ ազատ առեւտրի բաղադրիչի ընդլայնմանը:

Ինչպես նշեց եվրակոմիսար Յոհաննես Հանը, Եվրամիության ֆինանսական օգնությունը նախատեսված է 2015-2017 թվականներին Վրաստանում փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման համար:

Վրաստանին ֆինանսական օգնության նոր ծրագիրն ընդունվելու է մայիսին, Ռիգայում անցկացվելիք արեւելյան գործընկերության գագաթաժողովին:

«Համոզված եմ, որ 410 միլիոն եվրոն, որը մենք հատկացնելու ենք Վրաստանին, մտածված կծախսվի Եվրամիության հետ ազատ առեւտրի պայմանագրի իրականացման համար: Մենք առանձնակի աջակցություն պետք է ցուցաբերենք փոքր եւ միջին ձեռներեցության զարգացմանը: Բոլոր պահանջների բավարարումը գլխավոր մարտահրավերն է, թեպետ, միաժամանակ, այն Վրաստանի էկոնոմիկայի համար լուրջ հեռանկար է ներկայացնում»,- հայտարարեց Յոհաննես Հանը: